

Ա Ր Ա Ա Ս Վ Ա Ծ

Կանադականական

ԱՄՔ ԱՌԱՋԻՆ

1

ՄԵՇԵՐԳՈՂԸ

Մայր Անահիտը, երկու ձեռքերով, սեղմեց իր մարմնին
Նշենու ծառի ճյուղը սրբազան
Եվ ծնավ Արան։

Արան՝ արևի հրաթափ լույսի
Հրեղեն թիավար,
Արան՝ աստղերի հոտը պահպանող սրնադահար Հովիիկ,
Արշալույսների նոտան գինիով հարբած տեսանող,
Արան՝ թեավոր ցուլի եղջյուրներ հազած խոլ ոգի,
Արան՝ զարունը ոսկե շողերով պեղող և հերկող
Բյուրեղյա արոր,
Արան՝ բողբոջի աճը պաշտպանող ցողաթուրմ վահան,
Կախարդանք ցանող բույրասփյուռ ոհհան,
Արան՝ վառ ոգի և աստվածություն։

Մայր Անահիտը, երկու ձեռքերով, սեղմեց իր մարմնին
Նշենու ծառի ճյուղը սրբազան
Եվ ծնավ Արան։

Ողջունենք նրան, ողջունենք նրան։

ՎԻՊԱՍԱՆԸ

Երբ արևելքի սահմանի ծայրին թափվող մշուշում
Բացվեց երկնքի լուսաշող գուռը,
Եվ ծովի մի կարմիր
Սահեց սարերի սարսող կատարին—

Ամպերի միջից դուրս թռավ մի գունդ,
Երջեց, ոլորվեց,
Տարածվեց անծայր, կանաչ մի հրդեհ՝
Երկիրը հայող մագլցեց լուսե աստիճաններով
Եվ այլափոխվեց:

Հանկարծ հովերը

Վեր թռան խմբով,
Զարկին ամպերին վարդե թևերը,
Եաշեցին կամաց
Եվ, Արարատյան դաշտի վրայով,
Ճախրեցին, թռան փայլատակելով:

Գունդը վայր իջավ, որոտաց, ձեղքվեց
Եվ հրավառվեց:
Քոցերի միջից դուրս եկավ Արան:
Նրա հետ միասին
Դուրս եկան նաև
Ռոկե թևերով չորս շուն հրածին:

Արան գեղադեմ
Աստված էր վսեմ,
Այր էր վեհաշուք, խորոնկ աշքերով՝
Լվացված երազի խոր ծովով կապույտ
Ճկուն, ներդաշնակ, ձիդ սոճի մարմնով—
Գանգրահեր և շեկ:

Արևածագի լճում թաթախված

Իր քայլերի տակ
Փթթող լույսերի շառայլ էր շաղվում,
Եվ իր իրանը
Վեր էր սլանում
Ավյունով լեցուն բարդու ծառի պես:

Նա իր աջ ձեռքում բռնել էր ծաղկած մեծղի մի աղեղ
Եվ ակունքներով զարդարված գոտոց
Կախել էր բոցեղ, ոսկենախշ մի սուր:

Երբ Արան իջավ՝ բացվեց զարունը:

Խիստ անտառներում սոսի և նոճի
Խուլ հառաշանքով խոսեցին կամաց:

Հակինթ և արծաթ ապարանջաններ

Կախած հովերը՝

Դաշտերի վրայով սուրացին արագ,

Եվ պարտեզներում նշենիները բարձրացան ոտքի,

Եվ տառանվեցին, և սարսուցին:

Արտը արթնացավ: Ամեն մի արժատ մի կանթեղ վառեց:

Թուրաստաններում ուկեթափ մի վազք նիշեր արծակեց:

Փթթող տնկերի ծիլերի վրայից բոց արյուն կաթեց,

Եվ մեղուները՝ զմրուխտ մանգաղով,

Հնձեցին բացվող վարդերի թույրը:

Հարրած գարունը

Ներս մտավ, կանգնեց ծաղկած ձեռքերով:

Կանաչ արտերը շողուն մետաքսներ փռեցին չորս կողմ

Եվ խշխացին:

Գառան բառաշը խառնվեց շուշանի հեծկլտանքներին:

Մնվեց սմբուլը, և լալազարը,

Քրմապետ և մոդ,

Նայեց բախտավոր, ծիծաղուն, անհոգ:

Երբ Արան քայլեց՝ երկիրը ցնցվեց:

Մասիսի գլխից մինչև Հրազդանի շառաշող ափը,

Զորեղ ոգիներ, հողերի տակը, մուրճերը պարկին

Թնգող, շառաշող սալերի վրա,

Եվ մեր գետերը

Սուրացին արագ և վայր թափվեցին գոռում-զոշումով:

Արտույտը երգեց, կաքավը կանչեց,

Եվ արագիլը՝ լայնաթե թափով,

Վեր ելավ կախվեց:

Արան աղեղը բարձրացրեց, լարեց:

Կանչեց շներին և մտավ անտառ:

Երբ մտավ անտառ՝ խիտ սաղարթներում

Ասկեշարժ և խուլ փոթորիկ քայլեց:

Զայներ թնդացին: Կարծես երջանիկ

Եվ հարրած մի հով

Տրորեց ու շարժեց ծաղկման կանաչ ծով:

Լովում է անտառի խարշափը, շների նաշոքը,

Բեռվից ննջող շեփուրների կանշերը:

Վիպահանը

Արայի մասին, շարեցին երգեր,
Նվիրեցին զոհեր,
Եվ բագինների առջելը մաքմար
Առասպելեցին ձայներով հրավառ:

Երբ զոհ մատուցող դանակը քըմի
Միսրճվում էր եղջրավոր այծի
Խլրտող բկին՝ ժայթքող արյունը
Բոսոր գետակ էր կազմում դաշտերում՝
Եվ կակաչների թագը հրկիզում:

Երբ ազոթքների խոսքերը կախարդ
Վեր էին ելնում և հորիզոնի
Վրայից սավառնող ամպերին բախվում,
Որթատունկերը արթնանում էին
Ծակ եանաչ ծիլեր նետում արևին:

Մի գուան

Արան ներկա էր բոլոր վայրերում:
Լեռների ծաղկած լանջերի ծոցում
Նա սրնգահար և աստղահմա
Հովիվ էր պարթև և մոգ երազի,
Արտերի միջում ակոսներ բացող,
Խոփի ատամով հողերը հերկող,
Եզների գլխին հարայ-հեյ կանչող
Նա վեհ վարող էր—
Լայնաբուռ ձեռքի արագ շարժումով
Հունդերը նետող մեծղի ցանող էր:

Եզների մայոց:

Նրա լույսը ցնցող ներկա էր նռան
Կարմիր շրթերով բացվող ծաղիկում,
Նշենու թրթոռն ճյուղերի վրա,

Սիրանի լեցվող, հյութեղ մսերում
Եվ խնձորենու ճերմակ բոցերում:

Արան ներկա էր բոլոր սրտերում:

Գլուխցող տղբյուր: Կուծեցն
իւենց սաւերի վրա կըող հայ աղջիկներ:

Երբ լուսաբացի շողերի տակին
Թաքնված աղբյուրի զուլալ ջրերը
Մեծ սափորներով տուն էին տանում
Հայ աղջիկները,
Նրանց կրծքերին նրանց այտերին,
Թավշե աչքերի սարսուն տեմչանքում
Արան ներկա էր:

Նա էր վեր համեռմ քողը հարսների
Եվ նրանց տանջող, շփոթ երադից
Նա էր կառուցում բյուրեղյա դղյակ,
Արյունով սիրս ողողում նրանց:

Նա էր, որ զահել աղեղնակորի
Ժիր բազուկներում տաք պողպատ հալում,
Նրա աչքերը լեռների ջնշով,
Պայքարի համար, մաքրում, լվանում:

Տարիշ մի գուսան

Երբեմն հրեզեն Ձիան վրա նստած,
Նա նետի նման վազում էր, սլանում
Լեռան լանջերի զառիվերներով:

Թռչող այդ ձիու վառ սմբակները
Որոտի նման թմբկում էին,
Ժաժ տալիս լեռան անհարթ կողերը
Եվ արձագանքվում ժայռերի գլխին,
Ու կիրճերի մեջ, խորիսորատներում:

Երրորդ մի գուսան

Արան բնության բեղմնավոր թափի,
Սաղկածլումի լույսը շէր միայն—
Նա խորախորհուրդ, գերազույն ուժ էր:
Ոգու կշեռք էր, ներդաշնակություն—
Հիմնական պարի սկզբնասկիզբ շեշտով
Տոգորված շքեղ մի աստվածություն:

Պարի Եղանակներ:

Երբ ցանքերից հետո, արևամուտին,
Շինական, հովիվ, աղջիկներ, կանայք
Շողերի գծով շուրջպարում էին—
Արան այնտեղ էր:

Նրա գեղակարկառ

Սոսու պես ճկուն, սլացիկ մարմինը
Սարսուն ոստումի ալիք էր դառնում,
Աչ ու ձախ նետվում:

Եվ վերջալույսի

Լայն պատմուճանը ուսերին գցած՝
Նա միանում էր ոսկե նվազին:

Այդ վայրկյաններին ամեն ինչ լոռամ՝
Լսում էր նրա ոտքի դոփյունին
Եվ շարժումների թևավոր ճախրին:

Տավղահարների բարձր նվազը
Հոսում էր կանաչ դաշտերի վրայով
Եվ ծաղիկների թարմ բաժակները
Լցնում ճաճանչող գինիով հույղի:

Արան պարում էր:

Լույսերի բոսոր ոտքերը կամաց
Վեր էին սլանում լեռների վրայով
Եվ ոգիները՝ երազով հարրած,
Սավառնում էին:

Իրիկնամուտի աստղերի միջնվ։
Ամեն մի կույսի սիրատենչ սրտում
Նա թագավոր էր։

Նա, որ պիտի զա,
Հրավառ շրթերը տա իր շրթերին—
Նա, որ իր ծաղկում, պայծառ գրկումով
Պիտի իրանը սեղմի ստինքներին
Եվ գորովալի, կրակոտ շոյանքով
Պիտի իր ծարավ վարդը արյունի։

Արան պարում էր։

Սև հողերի տակ արթնանում էին
Ծաղկող ուժերի շոխնդ վազքերը։
Գաշտերի վրա ծով էր տառապում,
Ե՛վ այգիներում, և՛ պարտեզներում
Անձայն ձայներով բաքախում էին
Նոր ծաղկումների կանաչ սրտերը։
Արան պարում էր։

Ոսկե այդ պարը
Ցնցում էր ամբողջ Հայոց աշխարհը։

ԱՍՔ ԵՐԿՐՈՐԴ

1

ՄԵՆԵՐԳՈՂԵ

Գարուն արածող վիթի աշքերը
Լեցվում են կանաչ երազանքներով—
Հարբած մի քամու թեթև ոտքերը
Ծածկվում են ոսկե, կալծկլող ցողով։

Արևի հրատապ ճառագայթներում
Սրվում է սրտի սուրը մոգության,
Եվ լեռը տանող արահետներում
Քայլում է փառքը նոր աստվածության։

ԱՇ, թող կամարը եղանակների
Բանա ամպերում իր լայն աղեղը,
Եվ ձեռքը ուժգին անմահ հերոսի
Վառի իր նետով սիրո կանթեղը:

Երթերին տարած քաժակը գինու
Լցվել է բոցեղ մրցվեի համավ—

Ակոսում թաղված տերմերը հզու
Պայթում են խեղդված, խոզ ազակակով:

Աստղը փոխում է տեղը իր լույսի

Եվ սլանում է երկնքի պայով,

Որպեսզի բախտի կենորոնը փոխվի—

Բևոր բոցերով կիզել Արային:

Ես բաց եմ անում թերը իմ լայն

Եվ ընդունում եմ հեղեղը զարնան,

Որ փոթորկել է տիեղերքը համայն—

Սիրո բոցերով կիզել Արային:

2

Մեջիս է: Մես:

Առաջին գուսանը

Կեսօրվա պահին, երբ Արան հեծած

Իր երիվարը, կայծակի նման

Անցնում էր լանջով Արագած լեռան

Արոտատեղու արծաթի շնորավ

Վազող աղբյուրի հառաշող ափին—

Նա հանկարծ սոնամի արևը ուժում

Խառնած ծի տեսիլք:

Գեղանի, նրբին,

Վազող աղբյուրի հոսանքում նստած,

Եկահեր և մերկ մի աստվածուհի

Հվացվում էր հանգիստ:

Արան իր ձիան սանձերը բաշեց՝

Նայեց, հիացավ:

Նոր արեգակի

Հրալույս ծովից իցած տեսիլքը

Պսակված էր բոսոր, դեղին շողերով,

Եվ իր թևերից, և՛ ստինքներից

Ճրագ էր սահռում, ծփժփում օդում:

Նոր ծլած լվարդի բարակ շրթերը

Սարսում էին, և իր վարսերը

Այրվող հարդի պես ծածկում ուսերը:

Վինի մի հառաջ: Թմբուկի մի զարկ:

Երբ հանդիսեցին նրանց աշքերը՝

Աղբյուրը լեցվեց գուլգուլանքներով,

Արաի մեջ խաղաց արծաթե մի հով,

Ցողերով ծածկված ծաղկաթփերը

Իրար մոտեցան, դողացին կամաց,

Եվ անտառները բողբոցով ձայնով

Մեղմ հառաշեցին:

Արան վայր իցավ՝

Ուզեց մոտենալ: Աղջիկը շրից

Դուրս նետվեց արագ, նետեց ուսերին

Մի շղարշ կապույտ: Նրա աշքերից

Կայծեր վայր ընկան և պլալացին:

— Հեռացիր, զնա, մի՛ համարձակվիր,—

Գոռաց նա հուզված և ցասկուա ձայնով

Եվ շրի ափից թեթև ոստյունով,

Հեռացավ, վազեց:

Թեթևառոն Արան դուրս նետվեց,

Առաջը առավ այդ հրաշք աղջկա—

Նրան իր լույսում բռնեց, բանտարկեց:

— Հե՞յ, աղջիկ հրատես, մի՛ փախչիր այդպես:

Ես քո արևիդ աղբյուրը գիտեմ,

Կրծքերիդ վառված աստղերը գիտեմ,
Ինչ դու ես՝ ես եմ:
Անահիտ իմ մոր գուրգուրանքները,
Կախարդանքները և քո վարսերը
Ներկա են իմ մեջ ժննդյան օրից:

Ահա փթթել է, ծաղկել ու բացվել
Մեր զույգ սերմերի պայթած արյունը
Բոլոր վայրերում: Պետք է մեր ծառը
Դալար ճյուղերը նետի երկնքին,
Աճի, զարգանա, իրականանա:

Նա այդպես ասաց,
Աղջիկը կամաց
Գրկեց, վեր առավ,
Զետեղեց նրան իր թամբի առաջ—
Մտրակեց իր ձին:

Ամեն կողմից լսվում է վազող
Ճիան սմբակների ձայնը: Վարք կանգնած
Ճիսակատարները շուշապար են բնաւմ
և խմբերգում:

Ամբողջ այդ օրը երկիրը լիցվեց
Լեռից լեռ թռչող Արայի ձիու
Վրնջյուններով:
Գարունը ցնցվեց:
Ուկե մատներով տրորեց ծառերը,
Բույսերի ծոցում հակինթ զետեղեց
Եվ ծաղիկների բուրումով հարթեց:

Մեներգու

Տե՛ր Արա,
Իմ շրթերիս արմատները
Հասնում են քո սրտիդ տենդին
Եվ աճում են լույսերով:

Արտ և սար խորածուզվում են քո մեջ
Եվ երգիդ աղբյուրից
Խմում զովությունը առավոտվաւ:

Աշխարհը հնչում է ինչպես շրջող մի գիսավոր:
Զմրուխտը խառնվում է հրին,
Եվ տարածությունը այլափոխվում է:

3

Վիպատճ

Թագվոր-թագուհի իշան պալատը՝
Շինված արևի լուսե քարերով
Եվ ցցված բլրի ծառազարդ գլխին:
Շենքը այրվում էր բյուրեղի նման—
Փղոսկրե դուռ ուներ, մարմարե պատեր,
Աշտարակ ուներ վերամբարձ, սլացիկ.
Առյուծ և վիշապ քանդակներ ուներ,
Ուներ որթենու և նոան զարդեր:

Երբ լուր տարածվեց թագուհու մասին,
Նրա հուր-հրաշք աշքերի մասին,
Նրա գեղ այտերի կրակի մասին,
Բացված կակուի շրթերի մասին—
Յոթ օր յոթ զիշեր հարսանիք արին:

Խրախնության ծայները:

Կարասներ բացին Հոտավետ գինու,
Սառերի տակին սփռոց փոեցին—
Կերան, խմեցին, զարկին փանդիոր
Եվ երգ շարելով՝ պարեր պարեցին:

Լեռների կողմից Հովիվներ իշան՝
Աստղերով լեցված վառվուն աշքերով,
Իշան քրմերը, մոգերը հայոց,
Գառներ և եղներ զոհեցին բազում,
Կերան, խմեցին:

Առաջին ժայթքող
Եղան արյունի վառ հոսանքի մեջ
Նրանք թաթխեցին երկայն կարմիր թել՝
Թագվոր-թագուհուն վկա կանչելով,
Կոշեցին ոգին արգաստվորման:
Ժիր ջահելմերից,
Թագվորի համար,
Թիկնապահ խմբեր ընտրեցին շուտով,
Ընտրեցին նաև գեղանի քավոր,
Որպեսզի կտրի իր ձեռքի սրով
Խնձորը՝ ծածկված մեխակ ու մեղրով:

Տաք ձիեր հնձած երիտասարդներ
Խաղեր խաղացին դաշտերի վրայով
Եվ դեպի երկինք ուղղած աղնղով
Սրածայր նետի սարսափ թափեցին:

Ասին, կանչեցին: Ասին, թե Արան,
Անահիտ տիկնոց ուկեծին տղան,
Ռւժն է սրբազան,
Որով արևը հասկերի սրտում
Աճման բոցեր է զհտեղում, վառում:
Թե տերևները իր պատմուճանի
Ալմազ են փթթում, և թե վարդերի
Բույրը և թույրը դալիս է նրանից:

Ասին, թե Արան ոգին է այն մեծ,
Որ հասած նոան արյունի բոցով
Կիզում է կուզմի ծոցը հրաթով
Եվ իր առնությամբ՝ ծագիր լուսեցում
Կյանքեր է ստեղծում և բեղմնավորում:

Ասին, թե Արան բոլոր մայրերի
Կրծքերից հոսոք զերմ է քերկրալի,
Վազքերի միջից վազով կրակ է,
Սիրո սիրասուր, անուշ դանակ է:

Գարունը թնդաց, երգեց, քղավեց:

Երկնքի հրատապ լույսով համբուրված
Ճոխ այգիները տռատ ծաղկեցին,
Ակոս առ տկոս ճեղքված արտերում
Բարձրացան կանաչ հասկերի ծիլեր,
Եվ ծաղիկները, դաշտերի դրկում,
Վառեցին խնկի բուրող ածուխներ:

Շինականները
Չորս կողմ հառեցին իրենց աչքերը
Եվ ուրախացան: Եկել էր ահա,
Շաղկել և աճել արտերի վրա
Բերքը այս տարվա:

Գոմերից ելած

Անթիվ տավարը՝ ամպի պես աճած՝
Լեռն էր մազլցում, մայում, բառաշում:
Եվ գյուղի մարդիկ իրենց բեղերը
Երկայն շոյեցին,
Ե՞վ ուրախացան, և՛ կատակեցին:

Ի՞նչ մեծ էր, հսկա բերքը այս տարվա:

Թմրուկի, վիճի ուրախ ձայներ:

Ա.Ա.Ք ԵՐՐՈՐԴ

I

Առաջին գուսան

Ասեմ՝ լսեցեք:
Բարե տանք հրավառ աստղադաշտերը
Հերկող սայլերին,
Թոշող արևի բոսոր թևերին,
Իրիկունների բլուրներից իշնող
Քրտնած ձիերին:
Ասեմ՝ լսեցեք:

Օջախի առջև նստած ժամանակ
Զեր զույգ աշքերը տվեք երազին—
Խմեցեք կում-կում դեսպերի քամած
Ուժեղ և լեղի

Օշարակները:

Ասեմ՝ լսեցեք:
Արա աստծո աճած համբավը,
Նրա դեմքի լույսը, գնդեցկությունը:
Թև առավ, անցավ երկրի սահմանը,
Օտար ցեղերի ականջին հասավ:
Քայլեց դաշտերով, լեռներ մագլցեց—
Դյուցազնավիպեց, ասքի վերածվեց:
Ալան և պարթե, մոսկեր և հատեր,
Ստեղննորի աղատ սկյութացիները,
Արևածագի բազում տոհմերը,
Տոթ Միջագետքի սեամորթները—
Երազ ներշնչող ոսկե բառերով
Պատմեցին քաջի մեծության մասին,
Պատմեցին նրան, փառաբանեցին—
Զոհեր զոհեցին:

Երկրորդ գուսան

Ասեմ՝ լսեցեք:

Ասորիների անապատ երկրում
Կար-շկար հզոր, սևավարս և թուխ,
Ամեհի, կախարդ մի աստվածուհի:
Այդ աստվածուհին՝ ամեհի, կախարդ,
Օձի աղավնու զուգումից ծնված,
Իշտարի կրակե կաթով մեծացած—
Ինքնակալ և բիրոտ մի տիրուհի էր,
Մթին աշխարհի հույզերի վիճ էր,
Սրտերի՝ քարայր, սիրո՝ խորխորատ:
Զկար սիրահար,
Որ նրա հրատապ կրքին դիմանար:
Վավաշոտ և նենգ, սրբազան պոռնիկ—
Անապատ երկրի այս Շամիրամը,
Սերը բաղում էր հասած մրգի պնս,

Խածում, վայելում բոցավառ համբ,
Ապա, ալլալված, կատաղած, հրակեզ,
Սրասույր դաշույնը խփում էր սրտին,
Արյունում, սպանում իր սիրահարին:

Օձ էր թունավոր, ճերմակ աղավնի,
Նրա երակներում հոսող արյունը,
Նրա հաստ շրթերի տարփագին դողը,
Նրա մութ կրծքերի բոցե ալիքը,
Նրա պորաց տանջող հուրը, մրրիկը
Խարույկի նման բոցկլտում էին,
Փոթորկում, կիզում իր գիշերները,
Դաշունահարում իր գրգիռները:

Շատ մեղմ արևելյան երաժշտություն:

Մեղր, քայինք և սեռ արտահայտող մի մեղեղիացում՝ ներքին հեծելան-
տով և տարահիներով լեցված:

Երրորդ գոտան

Ուշ երեկո էր:

Իր դարատափի

Փարթամ բույսերով զարդարված այգում
Նա լուս պառկել էր, դիտում էր լուսնին:
Մեծ անապատի կլանիլ տոթ շունչը՝
Տարփով մոլեզնած ծալքերում մարմնի՝
Երազանքների գրգիռ էր Հյուսում
Եվ իր աշքերի վառված անդունդը
Հույզերով պեղում:
Երաժիշտները,
Նուրբ շոյանքներով,
Գրզոում էին վինի նըրին լարերը—
Լեցնում պարտեզը զսպված հառաջով:

Կես մերկ թագուհին,
Ոսկե իր թասը սեղմած շրթերին,
Արմավից շինված գինի էր խմում
Եվ լուսնի հրեղեն թեկերից ընկած
Հակինթ բոցերի մեջը տառապում:

Հեռվից տարածվող

Մթագնած և լերկ ավազի ժողից

Շոգու և առթի ամառ էր մագլցում:

Լուս էր աշխարհը:

Գինին և երգը,

Հրավառ վարդերի, նունուֆարների

Թույնը և բույրը,

Հովահարների թեթև զեփյուր

Իր երակներում չերմ էին թափում

Եվ իր մարմինը ցնցում ու լեցնում

Անուշ և փարթամ ցանկություններով:

Սարսուռզ լնցված իր մեծ աշքերը

Թագուհին կամաց հառեց երկնքին

Եվ հանկարծ ցնցվեց:

Կամար հոնքերը

Կիտեց և նայեց:

Վանդակի միջում փակված մի թուշուն

Երկայն դալալեց:

Երաժիշտները

Խուզորեն զարկին դողուն թմբուկին:

Թագուհին արագ պարպեց իր թասը,

Սծեց շրթերը և նորից նայեց,

Նայեց զարմանքով հեռավոր լուսնին:

Ի՞նչ էր այդ, երա՞դ:

Թառամած ուկի ճառագայթներում

Նախ լայն և պայծառ մի արատ կազմվեց —

Մի արատ կազմվեց, կամաց ոլորվեց,

Ասդ, ջահի պես, ուժով բռնկեց:

Ի՞նչ էր այդ, երա՞դ, խորհուրդ մի նշա՞ն,

Դերի նետած զաղունի մի ուռկա՞ն:

Թագուհու ցնցված մարմինը դոզաց:

Ստվերների միջում — նա պարզ տեսնում էր —

Վեր էր սլանում մի աստվածություն:

Ի՞նչ գեղեցիկ էր:

Նրա ձիգ մարմինը,
Ուսերին թափվող դեղին վաքսերը,
Կապույտ ջառալով լեցված աշքերը,
Ճկուն իրանը, ոչոր թևերը,
Թարձր ճակատը, շրթերը նրբին
Խենթացնող էին, անման, ճրածին։

Կրակի պես վառվեց սիրաբ թագուհու
Մարմնի ծալքերում խոզածերմ գինու
Մի ալիք վազեց
Եվ պորտը տրորեց։
«Թող գան մոգերը, շուտ գան մոգերը»։

Եվ երբ մոգերը
Եկան, կանգնեցին, և ըկրպազնցին—
Նա վեր բարձրացրեց այրվող աշքերը
Եվ մատը ցցեց, ցույց տվավ լուսնին։

Նայեցին երկայն և պրպտեցին
Լուսնու երեսը, նրա ցից լեռները։
Մեծ քրմապետը աստղերը շափեց,
Փսփսաց գաղտնի մոգական բառեր,
Կոշեց ոգիներ, թևավոր դևեր,
Ապա, աշքերը կես խփած, ասաց։

— Օ՛, մեծ Շամիրամ,
Եքկրի, եքկնքի անհազթ տիրուհի,
Այն, որ տեսնում ես, արմի թևից
Ընկած պատկեր է։ Երջանք լույսի
Արտացոլում է, ինչպես հայելի,
Ճակատագրական տեսիլք մի վսեմ,
Մի աստվածություն, գեղեցիկ, հրադեմ։
Գարո՞ւնն է արդյոք Եթե գարունն է,
Պոռթկող սերմերի ծլման ավյունն է—
Պատկերն է Արա կոշված դյուցազնի,
Հարկան տերը Հայոց աշխարհիւ

Նայիր, երկնքի մեջուեղը անցնող
Արծաթե լուսի բարակ այն շերտը
Ճամփա է հրատապ, որի բոցերով
Կյանքը անցնում է մահվան սահմանը,
Գնում միանում աստղերի խմբին:
Զոդիակոսի մոտ, Մեծ Արջը, ցնցված,
Դրեթե կալում է Վիշապի պոչին:
Թռչող Զիան մոտ կրակներ են գիղված,
Ինչ որ նշան է, որ խեցգետինը՝
Երկիրը Հայոց, պիտի ետ սողա
Եվ քո զենքերի տակը բոցկլտա:

Օ՛, Մեծ թագուհի, ամեն ինչ պարզ է:
Ճակատագիրը
Իր անիվները տանում շրջում է
Կախարդված լուսնի շավիղի միջից,
Փնտրում է Բայը, դարբնում Մակղիրը,
Ապա նա պատմեց, ոգևորվելով,
Արայի մասին, որ արթնացնում է
Գարնան ուժերը, բողբոջների մեջ
Արյուն է դիզում և ինքն էլ՝ հրաշեց,
Սաղկում, վիթթում է, կյանք առնում անվերջ:

Մեծ քրմապետ

Ասեմ, հայերը
Հմբուտ մարդիկ են, հոգիով կառչած
Երենց մեծ երկրին: Եվ ի՞նչ երկիր է...
Փարթամ, զովաշունչ, լեցված լուսավոր
Այդ ու պարտեզով և ձյունագագաթ
Հսկա լեռներով:

Գուան

Թագուհու սիրտը բարախեց ուժգին,
Եվ մեծ աշքերից կայծեր վայր ընկան.
Նա գինու թասը տարավ շրթերին
Եվ կամաց ծծեց:

Յամիրամ

Եթե այդպիս է ձեր պատմած Արան—
Ուզում եմ նրան:

Դրկեցեք երա մոտ մեծ ղեսպաններին,
Հետևորդներով, բազում ուղտերով
Եվ նվերներով թանկարժեք ու նուրբ:
Թող գա բաժանի իմ անկողինը:
Լինի տերը իմ, իմ ամուսինը:

Եթե այդպիս է ձեր պատմած Արան—
Ուզում եմ նրան:

ԱՍՔ ԶՈՐՅՈՒԴ

1

Վիպատան

Եվ ճամփա լնկավ մոգ և քրմերի
Եվ ղեսպանների մի մեծ շքախումբ:
Չարդ ու մետաքսով ծածկված ուղտերի
Շարանը անցավ անապատները,
Անցավ փոսերը, անցավ ցից և թումբ
Եվ, երերազով ու զրնգազով,
Մագլցեց դանդաղ մեծ բարձունքները —
Հասավ Հայատան:

Երբ, բլրի վրայից,
Ասորիները տեսան ծաղկազարդ

Եվ ոսկեգիսակ հսկա արտերը —
Շոյեցին իրենց ճոխ մորուքները,
Մնացին հափշտակված:

Հունիս էր բոցված,
Հրաբորք արեց
Իր աղամանդե լուսե թերը

Վայր էր երկարել,
Ճառագայթների տարածել գետեր,
Բոցով, ոսկիով լվացնել արտեր,
Հնկղմել փարթամ բուրատաններում։
Խնչ տեսարան էր... Հսկա լեռներում
Զյուն էր և բցուրեղ,
Իսկ վարը, դաշտում՝ կանաչ չոճեղեղ։

Հասան Արայի լուսավոր պալատ։
Փողեր փշեցին—
Ներս հրավիրվեցին։

Երկայն շապիկներ
Հազած մոգերի շարքի ետևից
Խմբով ներս մտան բազում ծառաներ,
Վայր դրին նվերներն իրենց ուսերից—
Երկրպագեցին։

Հետո ներս եկան,
Արծաթե փարթամ զենքերով զինված,
Կոնածե, հարուստ զլիարկներ հազած,
Հաղթանդամ և ժիր նետահարները։
Ապա քայլեցին՝ խուճուճ մազերով,
Ծանր գանգուրներ հյուսված մորուքով,
Բարդ օղեր կախած և իրանները
Ուկեղարդ ու ճոխ գոտիով սեղմած։
Մեծ դեսպանները։

Արան՝ դարձացած,
Նայեց այդ մարդկանց, նայեց գանձերին
Եվ համբերությամբ լսեց ճառերը։

Մեծ դեսպան

Մեր աստվածուհին,
Վեհ Շամիրամը, նա, որ իր կամքի
Հարվածով ահեղ սարսափ է ցանում
Ամբողջ աշխարհում, հրաման է տալիս
Հով և մրրիկին, տարվա շորս կողմի
Իրար հաջորդող եղանակներին,

Մարդկանց գործերին, կանանց հղիության,
Հուսնի փրկարար մակընթացության,
Աստղերի շարժման, թագավորներին—
Իր մեծ աշքերի ճրագը պայծառ
Նետել է վրադ և ցանկանում է,
Որ շուտ գաս մոտը, բաժանես իր բարձը,
Թշխանությունը, անհամար գանձը,
Ֆր երկրների հարստությունը:

Վիպասան

Ասաց, բարեց ու զետին փոխեց:

Արան, զվարճացած, կամաց ծիծաղեց
Եվ այսպես խոսեց.

Արա

Եղանակի հաջորդ, աղավնուց ծնված,

Շամիրամ կոչվող թագուհու մասին

Լսել եմ հաճախ:

Նրան բարեն տարեք

Եվ ասեք, որ չեմ կարող երբեք

Լքել երկիրա:

Ես այս հողերի

Ամեն մի ծլող բույսին և ծառին

Կապված եմ մարմնով՝ մարմնով, հոգով:

Եմ երակներում շրջող արյունը

Նրա արյունն է,

Եմ արև լույսս՝ նրա սրտից ժայթքող

Հուզման մեծ թևն է, և սուրս լուսեղ՝

Նրա զորության թափն է մշտահեղեղը

Իմացեք նաև, ամուսնացած եմ

Հոգուս օղակված այն վեհ Դիցուհուն,

Որի աշքերը մի-մի ճրագ են՝

Իզած աստղերի շահերից անմար:

Չեր մեծ թագուհու երկրի շուկայում

Արմավի ծառը քեղմնավորում են

Գնած վարսանդով, Ես ծախու վարսանդ

Չեմ կարող լինել, չեմ լինի երբեք:

Եռու վերադարձեք երկիրը ձեր տոթ,

Հուսնով կախարդված անապատները՝
Թե չէ լեռների և անտառների
Մեր ոգիները կարթնանան հանկարծ
Եվ ձեզ կհայածեն:

2

Շամիրամի շինդ պալատում: Մոգեր,
զինված մարդիկ, սպասավորներ, պահա-
պաններ, ծառաներ: Դոան առեւ շղթայված
վագրեր և ոտրուկներ:

Վիպասան

Մինչ Բարելոնում, քաղաք պալատում,
Պատրաստվում էին ընդունել Արան,
Եվ Շամիրամը՝ յուղերով օծված,
Թափանցիկ և նուրբ շղարշներում կորած,

Հոնքերը նախշված, վարսերը ներկված՝
Այրվում էր տենդում անհամբեր սպասման—
Եկան սարսափած իր դեսպանները
Եվ հազորդեցին սև լուրը մերժման:

Թագուհին շարժեց իր բոց աշքերը,
Կուրծքը վեր թռավ, շունչը ծանրացավ—
Կատաղեց, գոռաց:

Շամիրամ

Թող նոր դեսպաններ,
Ավելի ճարտար սլատգամավորներ
Վազեն նրա մոտ և ամեն գնով,
Ամեն խոստումով համոզին նրան:

Վիպասան

Այս անգամ հեծան Հայոց սահմանում
Գնած նժույգներ, Թամրեցին նրանց
Հրափայլ զարդերով և մետաքսներով
Պճած թամրերով և, գիշեր-ցերեկ,

Արագ սուրացին, հասան Արային
Եվ նորից ստացան նույն պատասխանը:

Շամիրամ

Հրաման եմ տալիս դաշտնահարել
Այդ դեսպաններին: Սյուներից կախել
Հետևորդներին:

Հրաման եմ տալիս

Առնել գանձերի հսկա մի քանակ,
Արձաններ ուկե, փղոսկրե սեղաններ,
Որ ինձ զրկած էր Մեծ Փարավոնը—
Առնել հյուսվածքներ, բյուրեղյա սկիհներ,
Ակունքով այրվող հարուստ վզնոցներ,
Հաղվագյուտ օղեր, արծաթ վահաններ,
Եվ, Եգիպտոսի մոգերի շինած,
Գաղտնի և կախարդ հմայող բուրումներ:

Վիպասան

Քեռնեցին գանձեր, հարստություններ,
Հեծան նժույգներ ավելի արագ
Եվ, անապատի ամպեր բարձրացնող
Ավագի միջով, տոթահար քամու
Դեղին վայոցի մշուշի միջով,
Ասպատակեցին, հասան Արային:
Չոքեցին հլու
Եվ հաղորդեցին կամքը թագուհու:

Արա

Իզուր եք բերել ձեր ճոխ գանձերը,
Իմ երկրում ունեմ այնպիսի գանձեր,
Որոնց նմանը ոչ մի տեղ չկա:

Իմ լուսաբացի

Զեռքերով կախված ամեն մի ցողը
Ավելի արժե, քան ձեր թանկագին
Քարերով ծածկված երկայն օղերը:
Արտում տառանվող հակինթ հասկերը,

Հեռան կատարի ձնծաղիկները,
Անտառում քայլող արծաթ հովերը,
Իրիկնամուտի ծովի պես փովող
Բոց ու կրակը ավելի արժեն,
Քան ձեր իրենի տեսքը ուկեղահ:

Վիպասան

Երբ Շամիքամը

Այդ կորակ մերժման վատ լուր առաջ՝
Պալատում մի խուզ փոթոքիկ քայլեց:
Խնճթացած և կույր, թագուհին վազեց
Դահլիճից զահին:

Դաշունահարեց

Իր նաժիշտներին, սիրահարներին
Եվ գոռաց, կանչեց,
Քարշ գալով գետնին:

Մի մութ գիշեր էր:

Եքլորի ժամին,
Նա՝ այլափոխված, զեր թռագ հանկարծ
Եվ, գալարվելով ու փրփրելով
Իր մոտը կանչեց զորավարներին
Եվ հրաման տվալ—
Կազմել մեծ բանակ,
Զիեր ժողովել արագասմբակ,
Աֆրիկյան փղեր և մեծաքանակ
Աղեղնավորներ ու ոտավորներ—
Դառնալ վառ կրակ,
Արագ,
Ինչպես քամի, ինչպես մօրիկ,
Ինչպես անզուսպ, փրփրող ալիք,
Ինչպես աշնան խոլ փոթորիկ,
Վազել, զարնել,
Փշրել, քանդել
Եվ Արային բռնել, բերել:

Փողերի ձայներ: Կանչ և աղմուկ:
Հովերի ոռնոց:

ԱՍՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1

Վիպասան

Արարատ լեռան առջեղ փակած
Ուկեզօծ գաշտում մեծ այգեքաղ էր
Յերքը առատ էր:

Զրնգում էին գերանդիները

Եվ մանգաղները —
Խոտ ու հատ հնձում, հասկերը կտրում,
Բլուրներ դիղում, կալսում, ամբարում:

Աշնան այտերը հրավառվում էին,
Նրա հուր ձեռքերը սարսում էին,
Կրծքերը նրա երերում էին:

Ամեն մի ողկույզ

Արև էր և հույզ, ամեն մի ծիրան՝
Հակինթե մի շողք, ամեն մի սալոր՝
Թավշաղույն ակունք և ամեն մի նուռ՝
Արյունով լցված բոցավառ մի հուր:

Հասուն դեղձերից լույս էր վար թօրում,
Խնձորի թուշը ամաշկոտ վարդ էր,
Տանձի սրածայր, հյութեղ սափորը
Լեցված էր համի, համի և բույրի
Անոշ նեկտարով:

Եվ թուղի մեջը

Եռում էր մեղքը՝ ճաթած շրթերը
Կառեւում հարթած, շլացած մեղլին:

Արագին գուան

Արարատ լեռան առջևը փոված
Ոսկեղօծ դաշտում մեծ այգեքաղ էր:

Արայի ողին՝ թևավոր, հրածին,
Խորասուզվում էր հյութի զետերում,
Մլման և ծաղկման արծաթ աղբյուրում,
Լվացվում հասնումի ճառագայթներում,
Ճախրում տեղից տեղ և՝ բոցապեղ,
Նիրհում ավյունի հրե աշխարհում
Եվ նոր ձեերով փթթումին հասնում:

Այս հար ծովացման հեղեղի վրայով,
Երշուն մետաքսներ շոյող ոտքերով,
Իր փերիների հետք միասին,
Անցնում էր երգով Հայոց թագուհին:

Երիկունները,
Երբ աղջիկների ոտքերի տակը
Ճզզանը տնքում, լեցվում էր հոսող
Խաղողի հյութով—

Պարի և երգի ծայներ:

Եինականները, հին մի կարասի շորջը բոլորված,
Եղջյուրաթասը երկնքին ցցած,
Քեֆ էին անում՝
Ռւրախ և տմբլան երգեր հառաջում.

Երբ վերջալույթ
Իր բոսոր նավի առաջաստները
Քոշում էր, ծալում և, գունատվելով,
Իջնում վիճերը՝ արթնանում էին
Լեռ ու անտառի, արտ ու պալտեղի
Մեծ ողինները:

Զրերի միջից կուրծ էին գալիս
Հրեղեն ձիեր, վիշտապ-ձկները,
Հուր գոմեշները և փերիները
Եվ, լուսաշողառ պսպղանքներով,
Սավառում էին արտերի վրայով:

Գիշերվա սլահին,

Երբ որ լուսինը ոսկե վահանը
Կախում էր հմայված երկնքի ծայրին
Եվ վայր էր թափում իր շեկ լույսերի
Թառամած ոսկին—

Բոլոր բույսերը՝

Մառը ծառի հետ, ծաղիկը ծաղկին
Գրկախառվելով՝ տատանվում էին
Եվ վառ ձայներով իրար հետ խոսում:

Զրերը հանկարծ կանգ էին առնում,
Եվ շահելները, բարախուն սրտով,
Մպառում էին, որ գետ և լճին
Նետած իրերը

Զուտ ոսկի դառնան կամ ակունք հրաշող:

Ժայռերի միջից, ապառաժների
Պատուած ճեղքերից,

Դուրս էին գալիս ուրվականները,

Մանր ոտքերով շափում զաշտերը,

Վազվզում, սահում և այգիների

Կանաչի վրայով ցատկում ծառեծառ,

Թթվահամ հոնի արյունը ծծում,

Միրանի անուշ մսերը ծամում,

Ապա, լուսնո շեկ ճառագայթներով,

Մազլցում անհայտ, կորչում ամպերում:

Ա՛չ, ուրախ եղեք—

Եեցրեք փարշերը.

Թող փանդիռները

Զարհեն և երգեն

Աշնան տաղերը:

Վիպատան

Արան այնտեղ էր: Նա ամեն աեղ էր:
Քարերի ծոցում նա հոսուն ջուր էր,
Սառերի գլխին թևթև սարսուռ էր,
Բլրի կատարին հարսնուկի հուր էր
Եվ աղջիկների կրծքերի վրա
Նա մի ալ-վալա
Բոց սիրո թե էլլ

Առաջին գուսան

Լեցրեք փարչերը,
Թող փանդիռները
Զարնեն և երգեն
Աշնան տաղերը:

Խոսմբը

Լեցրեք փարչերը, թող փանդիռները
Զարնեն և երգեն աշնան տաղերը:
Գըլեզան:

Ահա շրջել են վերի աստղերը՝
Վար թափել իրենց հրե վարսերը:
Մըրալե:

Աղջի, մի՛ ծածկիր սրտիդ աղերսը —
Կաքավիր նաղով շուրջպարի ներսը:
Գըլեզան:

Եկ, քո աչքերիդ շուշանը քաղենք —
Եկ, քո շրթերիդ համերը խմենք:
Մըրալե:

Տղա, բարձրացուը սուրը քո սըտիդ—
Փոփո ամառը քո սև աշքերիդ:

Գըլեջան:

ԱՇ, թող պայտերը անսանձ քո ծիուդ
Դոփեն, կայծակեն ձամփեքում հոգուդ:

Մըրալե:

Թող հասկը հասկին նետի իր ոսկին,
Գնա, միանա Արայի սրտին:

Գըլեջան:

Լեցրեք փարչերը, թող փանդիռները
Զարնեն և երգեն աշնան տաղերը:

Մըրալե:

Պարը զնալով աշխուժանում է: Սափ,
ծնծղա, թմբուկ:

Մենարգողի ծայն

Մարդը հող է և ժամանակ, Մարդը հող է և ծիլ, Մարդը հող է և
մահ:

Փոթորկվում և փոխվում են եղանակները, կույսերը շրջվում են, և
շափերը փոխում են իրենց եռանկյունին:

Առյուծը՝ անվախ և կանաչ, ոռնում է ոստանի լորս դռների առջեւ:
Քամիները ման են զալիս պողպատե սմբակներ հագած, կեռան թևերով
ծիերը խրխնջում են, պատռում ամպերը, կայծակում:

Ահա հնչում են փողերը,
Փոթորիկը պատռում է իր թմբուկները,

Հայր Արամազդ, Մայր Անահիտ—
Արա, Արա, Արա:

ԱՍՔ ՎԵՅՏԵՐԱՐԴ

1

Վիպասան

Աշունը փշրեց ճյուղերը իր բոց,
Էճերի վրայից ամպեր վազեցին,
Թախվեցին իրար և, որոտալով,
Թռան, ժողվեցին Մասիսի գլխին:

Հովը պատռտեց կրծքերը իր սև,
Հասկերը քանդեց, ծառերը կոտրեց,
Վայեց, հառաշեց:

Անձրև և կարկուտ

Մրճահարեցին դաշտերը դեղնած
Եվ, գետակ-գետակ, հոսեցին կատղած
Թլուրների վրայից, ժայռերի միջով:
Հրաբորք արել իր վառ ուղտերի
Մանձերը քաշեց՝ ներս մտավ կամաց
Աղեղնավորը:

Կարճացավ օրը,

Եվ նոյեմբերը հեծկլտաց, սողաց:

Հայոց աշխարհը ժաժ եկավ, ցնցվեց:
Կատաղի թափով մի մեծ փոթորիկ
Իր սև դներին աղատ արձակեց
Եվ առաջացավ, դարձավ զոռ մրրիկ:
Կորդվաց լեռների փեշերով մթնած
Վեր մազլցեցին Ասորեստանի
Թյուր բանակները:

Յոթ անգամ հազար

Ռուբով քայլողներ, երեսուն հազար
Հեծելազորքեր, հարյուր հիսուն փիղ,
Վեց հարյուր ուղտեր, զրահավոր կառքեր,
Զքրս կողմից ժողված հաստաշուրթ ցեղեր

Ճեղքեցին քարոտ կիրճեր, ճամփաներ
Եվ, բղավելով, թմբկահարելով,
Եկան կանգնեցին Հայոց աշխարհի
Սրբազն դաշտում,

Որպեսպի նվաճեն

Եվ գերի տանեն
Արև Արային:

Տեղ հասան թե չէ՝ զորապետները
Հրամաններ տվին: Չորքը բաժնեցին
Աղ ու ձախ թեկի, պատսպարեցին
Գնդերի ետև, որոնց պաշտոնն էր
Օգնել կատաղի ծիավորներին,
Առաջը առնել կողմերից եկող
Հարձակումների:

Այդ դասավորման

Մեջտեղում դրին ոտավորներին,
Ժիր փաղանգներին և նրանց առջև
Դրին աֆրիկյան հսկայամարմին
Անհաղթ փղերին:
«Թող գան հայերը, չափվեն թող մեզ Հետ, —
Կատաղած գոռաց մի ծեր քրմապետ, —
Թող գան հայերը, չափվեն թող մեզ Հետ»:

Առաջին գուսան

Աշնան մետաղե, զնզող ձայները
Սնծղայի նման կական ժայռերին:
Թափվեցին մեռած, չոր տերևները,
Եվ Արարատի գլխի բերդմբից
Ոլորուն կրակով շանթեր վայր ընկան,
Եվ դղրդացին, և փայլատակեցին:

Երկրորդ գուսան

Արան այդ տեսավ՝ ձայն տվակ մարդկանց:
Հունձի և քաղի աշխատանքները

Հքան մարդիկը արագ զինվեցին,
Կաղմեցին գնդեր ճիշվորերի
Եւ, մի-մի աղեղ, մի-մի թուր բռնած,
Կանգնեցին սեղմված շարքը Դյաւզաղնի:

Հայոց աստվածը՝ զեղաղեմ և վեհ,
Աերմակ ձի հեծած, աղեղը ժուրին,
Մի մեծ թուր կախած,

Ասես ամպերի

Միջից դուրս եկած հրաբորը լույս լիներ՝
Շուշպող անսիէք:

Նրա զույգ աշքերը

Պարզ էին, ինչպէս երկինք մի լազուր,
Եւ իր վարսերը՝ արևադանգուր,
Բոցկլուսմ էին ասերի վրա:

Ամպերի դդրդոց: Բմբուկների
Բարվածներ: Նետերի շվոց:

Առաջին գուտան

Հայոց աստվածը իր թուրը հանեց,
Իր կարիճների առջեր ընկալ,
Թափով խոյացավ
Եւ, Բաբելոնի զորքերի մեջը,
Վիթխարի ուժով գրոհեց և կովեց:

Թշնամու նետած

Վահան-նիզակով զինված շարքերը,
Բքից տրորված ծառերի նման,
Ազ ու ծախ ընկան և, սասանվելով,
Դաշտը ծածկեցին հազար դիակով
Եւ ետ քաշվեցին:

Երբ Շամիրամը

Իր ոսկեղօծված կառքի վրայից
Այդ գուժը տեսավ՝ դողաց, կատաղեց:
Հրամաններ տվավ, գոռաց, հայնոյեց:

Զորականները ասին, — Թագուհի,
Դա հովէ և բուք
Լեռներից իջած դա հովէ անմահ,
Դա հովէ և բուք:

— Կտրեք այդ հովի թները իսկույն, —
Խենթացած ձայնով բղավեց թագուհին:
— Կտրել այդ հովի թները իսկույն, —
Կրկնեցին խմբով բոլոր ձայները:

Եվ նոր գնդերը՝

Բռնած երկաթե հոկա վահաններ,

Առաջ նետվեցին, վայեցին, զարկին,

Զարկին, վայեցին:

Արան իր թուրք բարձր եարկառեց,

Մտրակեց իր ծին, ամիհի ուժով,

Թշնամիների շարքերը հնձեց:

Իր քաջ հայերը՝ փոթորկամրց'ն

Հոսանքներ կազմած, պաշարում էին

Չտեսնված մի ուսում:

Հայ երկրների

Բոլոր վայրերից՝ Սյունիքից, Տայքից,

Վասպուրականից, զիշեր և ցերեկ

Ճամփա կտրելով, նոր սարտիզներէ

Փազանդներ էին շուտափույթ հաշնում,

Արային միանում:

Հանձնել Այստին

Ասորեստանի սշոտիկի թագուհո՞ւն,

Նրա ամալ խավարից ելած ուժերի՞ն,

Դժոխքում սնված ուրիշականների՞ն,

Չէ, այդ չէ, այդ չէ:

Չէ, այդ չէ, այդ չէ... գնդեց հրե՝

Նիզակ նիզակին, սրեր սրերին

Շանթահար զարդով՝ անշուսչ գրոհով

Հարձակվում էին, կովում բոց թափով:

Վախցած փղերը ետ էին փախշում:
Տեղի, նիզակի շաշունը ահեղ
Արձագանքվում էր ամբողջ երկնքում
Եվ, հեղեղ դարձած, վայր էր գլորվում:
Թագուհին նայեց՝ իր գույնը նետեց:
Իր բոց թիրերից կայծակներ ընկան,
Նա այսահարված՝ իր բազուկները
Գողալով ցցեց դեպի երկինքը
Եվ Ռոբոմ, Ասագ, Ալա և Գալլա
Անվերջ գոռալով, կանչեց Դեերին:

Վազելով եկան քրմեր և մոգեր:
Ասին.— Թագուհի, թշնամի մի ամպ,
Երկնքից կախված սպառնում է զորքին:

— Ամպի սրտի մեջ մխրճել նիզակ,
Արյունել նրան, տապալել արագ:

— Ամպի սրտի մեջ մխրճել նիզակ,
Արյունել նրան, տապալել արագ,—
Շարքերով զորքի գոռացին կրկնակ:

Այդ կանչը անդադար կրկնվում է
և արծագանքվում:

Թշնամին բերավ զորավոր խմբեր։
Օդը ցնցեցին ծնծղա և շեփոր։
Կատաղի ուզմը սկսվեց նորից։
Թափալվող ամպի այդ ուժի առջե
Հայ մարտիկները տատամսեցին
Եվ ետ քաշվեցին։

Թայց երբ որ տեսան
Արայի գլխի շուրջը պտուվող
Հրավառ լույսերը,
Եվ երբ որ տեսան իր հսկա սրի
Զարկի տակ ընկնող թշնամիներին՝
Առաջ նետվեցին, կովեցին գինով։

Երիկնամուտին, երբ ամեն կողմից
Առվակ առ առվակ արյուն էր հոսում,
Եվ Մարտիկները մեծ հոգնությունից
Կուրացած էին՝ մեկ էլ հովերեր
Անտառի միջից մի խարշափ վազեց,
Ապա դզրդող մի որոտ ժայթքեց:
Ալքերի խմբեր, մի էգ ուզ բռնած,
Նրան խեղղեցին, զոհեցին նրան:
Ուզը թպրտաց: Ալքերը լացին:

Ուզը թպրտաց, ալքերը լացին,
Եվ այդ վայրկյանին
Որսուղ ամպից վայր իշավ մի նետ,
Մտավ Արայի նժույզի կողին՝
Վայր գլորեց նրան:

Օ՛, մեծ Շամիրամ,

Արայի հուր ձին ոև արյուն փսխեց,
Ընկավ, տապալվեց:
— Չլինի որ դիպչեք,
Արյունեք, սպանեք Արա Դյուցազնին,
Նրան ողջ բռնեք և մոտս բերեք:

Եվ Շամիրամը, հոգումից ցնցված,
Իր վեցձիանի կառօք վեր քշեց.
Եվ բւրի գլխին անհամբեր սպասեց:

Փանդիոի ողբ: Վիների լաց:

Երբ հորիզոնի սարսուատան,
Թոշնած վարդերը կամաց վայր ընկան,
Մենակյաց մի հով, պղնձե թևերը
Արագ շարժելով, ճեղքեց ամպերը,
Սուրալով իշավ և, հառաշելով,
Դեգերեց, անցավ դաշտի վրայով:

Կուլ մի հեծկլտանք

Տրորեց աշխարհը:
Արան՝ թագավոր ժաղկավիտ գարնան,
Նետք միսրակած սրբազն կրծքին,
Նշենու կռարած բոստը ճյուղի պես,
Հոգին հանձնել էր աստղերին հրակեց:

ԱՅՋ ՖՈԲԵՐՈՐԴ

1

Մենագործ

Օ՛, ցավ, օ՛, ցավ, օ՛, ցավ.
Աստված մի մեռավ:
Սփրինեցին շրթերն արևի,
Էռյալ բեկվեց,
Եվ աստղը առավոտյան մորմոքելով
Պսադաց:

Օ՛, ցավ, օ՛, ցավ, օ՛, ցավ.
Աստված մի մեռավ:
Գարունը փշրեց իր անիվները,
Շվարեցին սերմերը,
Եվ ծառերը աղքատացան:

Մեռավ Արան, մեռավ Արան՝
Սրբազն սիրտը ժաղկող գարնան:

Գուսան

Ամբողջ երկիրը սասանած լոեց,
Սարերի վրայով, դաշտերի վրայով
Սառնաշունչ և մերկ մի ձմեռ քահեց:
Էեռները իրենց բարձր գագաթը
Ծածկեցին ահրենկած ամպերի ծոցում,
Եվ առանձնացավ վես Արարատը:
Սուր վշտով պեղված հողերի տակից

Որոտներ անցան։ Երկնքի ծայրից
Եանթահար ընկան պատուված լույսեր
Եվ Տայքից մինչև Գուգարք ու Սովոր,
Մինչև Սասունը, Փայտակարանը
Սուզի դառնառղը ձայներ բարձրացան
Եվ աղաղակներ բողոքի ցաման։

Ողբասան կանայք, քրմերին խառնված,
Քայլեցին պարով, վայելով լացին—
Զոհաբերեցին իրենց վարսերը
Եվ պատուեցին իրենց կրծքերը։

Ողբասաններ

Արա Գեղեցիկ, Արա Գեղեցիկ...
Երբ նա վայր ընկավ,
Մեռավ—
Զեռքերը սառած կպան հողերին՝
Հողերը դժբախտ լուռ մորմոքեցին։

Երբ նա վայր ընկավ,
Մեռավ—
Անահիտ իր մոր սրտիցը կաթեց,
Երկու մեծ կաթիլ վառ արյուն կաթեց՝
Լեռ ու ձոր ցնցեց։
Օ՛, բողբոջների լուսատու աստված,
Օ՛, գարուն քանդված...
Սոսյաց անտառի մերկացած ու չոր սազարթների տակ,
Հիվանդ արտերում, դաշտերում զատարկ
Ողբ ասին, լացին լորի և տատրակ։

Լացին, ողբացին, ինչպես ողբում են,
Ինչպես ողբում են, կրծքին ծեծելով,
Հարազատ մի հոր գիտկի առաջ,
Գետում խեղդված զավակի առաջ,
Փերթաթափ եղած խեղճ վարդի առաջ,
Տանիքը փլված խրճիթի առջե,
Կույր ծնված տղայի խավարի առջե—

կացին, ողբացին, սրինգները վշտի
Հեծկլտանքներով լացին, ողբացին,
Եվ լացավ, ողբաց քարի տակ սեղմված ուհանը թոշնած—
Անցորեն արտը քամիով ծեծված,
Չորցած աղբյուրի ափը մենակյաց,
Ծաղիկից զրկված բլրի կատարը,
Արել կորցրած խարված ամառը:

Գուտան

Մինչ բիրտ ասորիք ամեն ինչ քանդում,
Ավերում էին—

Ամենավսեմ,

Գոռող, քաջարի Հայոց այրերը
Վեր էին ցցում իրենց սրերը,
Գոռում, բողոքում
Եվ ետ պահանջում իրենց Արային:
Տարոնի դաշտից, Աղձնիքից, Մոկքից,
Հայկական Պարի հպարտ լեռներից
Նոր ձարդիկ էին գալիս անդադար
Եվ բարկությունից ցնցված, գողաճար,
Պատրաստվում էին նոր պատերազմի:

— Մենք ետ ենք ուզում մեր վեհ Արային:
Քաջեր, ժողվեցեք մեր մարտիկներին
Եվ հուր ու կրակով նետվենք կովի դաշտ՝
Տապալենք, հաղթենք թշնամուն անհաշտ:
Մենք ետ ենք ուզում մեր վեհ Արային:
Եվ այդ ձայների արձագանքները
Լեռնելեռ անցան, ընկան դաշտերը
Եվ որոտացին:

Երբ Շամիրամը այդ կոչը լսեց՝

Կախեցավ, հուզվեց,
Կանչեց քրմերին, կախարդողներին
Եվ հայտնեց նրանց, որ աստվածները
Հրաման են ստացել լքել ամուերը,
Շուտափութիշնել
Եվ Արա քաջին նոր կյանք պարզեց:

Դիակապուտների խմբեր գնացին
Եվ հազարավոր դիակների մեջ,
Գտան Արային:

Հայեր

— Մենք ետ ենք ուզում մեր վեհ Արային:

Գուսան

Գտան Արային և տարան պալատ:
Նրա գորովալի և գեղ մարմինը
Պառկած էր անշունչ, ինչպես մի արձան:
Ճակատի վրա մի վերք էր բացվել՝
Սուտակի նման պսպղուն վառվել:
Գունատվել էին իր շրթունքները,
Բայց իր գանգրավոր, վեհաշուք գլխի
Շուրջը ճրավառ մի լույս էր վառվում
Եվ ճառագայթում:

Ծամիրամ

Ես չէի ուզում նրան մեռած տեսնել,
Գեղանի դեմքը սփրթնած տեսնել,
Եվ իր շրթերը անարյուն տեսնել,
Թո՞ղ նրա ճրագը աստղերից իջնի
Եվ սիրտը նրա կյանքով բարախի:

Լսվում է շարս շնիկների
մղկոցը:

Գուսան

Օրերը անցան, Իզուր ժողերը,
Գաղտնի բառերի կախարդող շեշտով,
Վերակոչեցին մութ ոգիներին՝
Իշտար, Մարզուկին, դև և ալքերին —
Արան շարթնացավ:

Տասներկու ցերեկ,
Տասներկու գիշեր նրա ջուրչը դարձան
Տասներեքերորդ օրվա լուսաշող ծագին
Ամպերը հանկարծ խով որոտացին
Եվ ճարճատելով, կայծակներ ընկան,
Կպան պալատի առջեի դռան—
Քոցակիզմեցին:

Մոգերը վախցան:
Իրենց թագուհուն շուտ խորհուրդ տվին
Տանել Արային գիշերվա մութով—

Մի լույս կապուտակ,
Հերարձակ իջավ—
Վառեց Արայի երկու աշքերը:

Վառեց Արայի երկու աշքերը,
Ոսկիով լվաց նրա վարսերը:
Արան բարձրացավ և հանգիստ նստեց:
Նստեց և խոսեց:

Օրա

Անտես աշխարհը
Տեսանելի է: Նա մեծ հայելի է,
Որ լի է կյանքի թաքնված ձեերով՝
Աշխարհաշինման նախակերպերով:

Երբ սանդուղքներով ոլորտապտույտ
Մտա հողերի մթնած մեծ վիճը՝
Ինձ բոլորթին բարդ այն կերպերը,
Որոնց առջեզ ո՞չ մի դուռ կամ պատ,
Բ' չ մի բերդ ամուր
Չեն կարող ցցել անանց մի արգելք:

Նրանց արմատները,

Սպասող սերմերի հուր մագիլները
Պատում են ներքին լույսի ամպերը:
Հերկված ճամփերում արյուն է հոսում՝
Կանաչ զորություն և համառություն,
Յոթը կրակ են
Յոթ անգամ բացված,

Յոթը ուժերով անողոք ճեղքված
Եվ յսթ կյանքերի ձեերը առած:

Հասկացա, որ դրանք այն հոսանքներն են,
Հյուլեն իր սաղմում խեղդող ուժերը,
Արոնց սահմանից անցնելու համար
Պետք է այրի սիրոտ և պայքար համար:

Ասի, ես պետք է անցնեմ այս խավար
Լաբիրինթոսը,
Ուկեծին իմ մոր
Փեշերին հասնեմ և Անահիտի
Արգանդի լույսը երկու ձեռքերով
Ժողվեմ և խմեմ,

Եվ երբ այս արի՝

Իմ ձեռքը զինվեց բոցավառ սրով —
Ես ճամփա բացի խավարի միջով։

Հնկա ուրիշ վայր։

Կարծես լեռան մեջ
Բացված մի կիրճ էր, լեցված սրածայր
Հսկա ժայռերով։
Երբ առաջացա՝
Սառերը հանկարծ շարժվեցին կամաց —
Վիշապի դեմքով շարժվեցին իմ զեմ։
— Ես հասկանում եմ, — ասի ես նրանց, —
Միին աշխարհի
Քաղաքի վրա իշխող արքայի
Դուք պահակներն եք։

Դուք ոգիներն եք

Մեռնող իղձերի՝
Հագված պարապով գերեզմանների։

Վեր առա ձեռքս և կարկառեցի
Մեզս բոցկլտող զահը իմ սրտի,
Այդ ոգիները սողացին մի կողմ —
Ես առաջացա։

Առջևս բացվեց մի կամար հսկա,
Որտեղից լույսի հեղեղ էր թափվում։
— Դու վերադարձար, դու վերադարձար, —
Փսփսաց մի ծայն, և սեր մի հրատապ
Ինձ գիրկը առավ։
Կյանքը ծնվում է արգանդում հրավառ
Եվ նորից իշնում արգանդը հրավառ։

Ինչքա՞ն ժամանակ այնտեղ մնացի,
Ես լավ չեմ հիշում: Հիշում եմ, որ լույս
Կամարի պարզած նեղ ոլորտներով
Ես վեր բարձրացա և աշտարակի
Բարձրաբերձ գլխին կանգնած նայեցի:

Ամբողջ տիեզերքը փովեց առջև:
Պետք է իմանալ, աստվածները իսկ
Իրենց սահմանած երկնքի մասից;
Իրենց մեջ ապրող հույզի աշխարհից,
Իրենց աստղերի ոլորշրջանից
Շատ շեն հեռանում:

Այն որ հեռու է—

Թվերի ծովը, բարդ հավելումի
Խաշածն կարգը, անծայրածիրը՝
Մնում է թաքնված:

Այնտեղից տեսա Ամբողջությունը:
Աստղադաշտերի հսկողությունը,
Արելք շրջող ոսկեթափ բացը,
Արեամուտքի բոսոր շրջանը,
Մոլորակներում պառկած ծովերը,
Բյուր արեների լուսե գետերը:

Մնացի սասանած:

Աջից և ձախից,
Կոնածն ցցված Մեջտեղի կողմից,
Մեկմեկի խառնված, մեծ ալիքների
Եվ հոսանքների ջրվեժ է թափավում:
Անթիվ աստղերը՝ ոսկե դաշտ կազմած,
Փայլվում էին, երերում էին:
Գիսավորները՝ հրաբոց և արագ,
Մազլցում էին դեպի անհունը,
Ապա ոլորվում, վայր էին սահնում
Երկնակամարի զառիվայրներով:

Այդքան մեծության բերք մղկտաց
Իմ կոպերի տակ: Սիրուս ի՞նչ կերպով

Կարող էր գտնել բարախման նկը
Եվ անծայրածիր անվերջությունը։
Ինչպես կարող էր հոգու մեջ գտնել
Հիմնական շեշտը իր արարշության։

Նորից վայր իշաւ

Կանգնեցի առջև մի վերջալույսի։
Հազիվ թե նիրհող արևից մեկը
Սուզվել էր ծովում իր հորիզոնի—
Աղամամութը, արևածագը, ապա գիշերը
Ճախարակի պես աջ ու ձախ դարձան,
Երկնակամարը լեցրին փոփոխվող
Լույսի, խավարի զորագնդերով։

Հանգիստ դիտեցինք

Մտքիս մեջ դանդաղ, ալիքանման շրջաններ անցան,
Եվ ժամանակը,
Լողացող տղայի կայտառ շարժումով,
Թափառեց մեցս, ճեղքեց շրերը։

Ուզեցի թափով նետվել ետևից
Ռլորապտույտ շարժվող արևի,
Հագնել ճրագը, ճախրել նրա հետ
Այդ պահին, սակայն, հոգնություն զգացի,
Կոպերիս վրա ծանր թե նստեց,
Լեցվեցի քնով։

Լեցվեցի քնով,

Եվ քնի պահին իմ ներքին, գաղտնի
Աշքերիս առջև տարածվեց մի ծով՝
Անհուն և անծայր, անափ և անվերը։

Լուս հայելի էր զմրուխտե ծովը
Առերես միայն։

Պարզ էր ու հանգիստ,

Անծայր շրերի թաքնված խորքերում
Կատաղի, ծածուկ պայքար էր մզվում։

Խաղաղությունը ծնվում է ներսի
Մաքառոզ ուժից, Երբ իր դսերին
Հաղթահարում է կովող ալիքը՝
Դալիս պառկում է հայելու կրծքին:

Ներսում աչքերս պարզ տհանում էին
Սովերի խորքում, մթնած աշխարհում,
Զորությունների մղած պայքարը:
Ինձ ակներն էր.

Ամեն ինչ, որ կա,

Ես կամ նրա մեջ:

Ու վայր սուզվեցին, միացան նրանց:

Պեղեցի ջուրը, նրա հաստ մետաղը,

Բերդերը նրա

Եվ թափալ եկա այդ բուքի գրկում:

Ես անհետացա, Քնեցի կարծես:

Ինձ թվաց, որ բյուր դարեր եմ քնել —

Կամ թե քնել եմ մի քանի վայրկյան:

Չափել գաղտնիքը՝ անկարելի է:

Հայտնի էր միայն, որ ծովի մթին,

Անվերջ պայքարը մեջս առնելով՝

Ես դարձա նոր ձև, լինելու նոր կերպ,

Կյանքի նոր ճախրանք, միություն մի նոր:

Ուսերիս վրայից անցած կյանքերի

Քողերը ընկան: Մարմինս հաղավ

Լույսերի մի լիճ: Սրտիս սահմանը

Լայնացավ, շարժվեց, և ես նիրհեցի,

Միացա ընդմիշտ կյանքի ճրագին:

Հասկացա, որ երբ երկու ենք ասում՝

Չկա երկուսը. Երեք ենք ասում՝

Չկա երեքը, չկա հազարը,

Այլ կա միաձույլ Մեկություն մի վառ:

Հասնելու համար Մեկությանն այդ վառ՝

Պետք է վիշտապի աշքերը հանել,

Բաժանումների թշնամուն հաղթել

Եվ այլափոխվել:

Ահա կանգնած եմ բաժանումների
Կենտրոնում ուկել:

Ես՝ միություն եմ:
Երկու բնեռով շղթայված խորհուրդ,
Հավիտենական ներկայություն եմ,
Գարնան պոռթկումով ժայթքող նոր ավիշ,
Հաց եմ և զինի՝ զոհաբերություն,
Հերկող և ցանող անմեռ զորություն:
